



91. ՏՂԻ ՄԵ ՀԵՔԻԱԹ

Զրուց օր գրնկնա վըր կնկան՝ յըմեն լե դինան՝ ախշար դրո մեկ մե շէղեք է, օր ընդրան հասկընա: Կնիկ խսմի ձմերկի պես բան է, կառնիս, շըս դինա հասուկ է թե քալ: Քանի դըռ շը կարգվեր է, կըսիս իմալ հրիշտակ, գիկա կեսրարի տուն, կը դառնա սատանա, կպի իրկա փողպատ: Կա օր քանի աղջիկ է՝ սատանից սատանա է, շար ու անսպեռ, կարգվա՛վ՝ կը դառնա հմալ համավոր, հմալ մլախիմ, կըսիս հոգիսի հանիմ տամ ըդոր:

Օր կնիկ խսմի հմալ է, ձրգի զրուց մ'էնիմ: Կէղնի-չէղնի աղջիկ մե կէղնի, դիկան զըդի գուզին տանին հարս. հմա դըռ յոտք շեմքից ներս շը թալեր է, կը դառնա փառանի գել մե, գրնկնա տան մեջ: Տնեցիք շատ կը մտածին, շատ մառախ կէնին, օր զնորհարսի հետ չեզու մե գտնան, շարա շէղնի, ըդի զըմեն օրբըդօր կը դառնու թաթար գերի: Թե քե՛ք յուզենա տախտ ա՛վլե՛ խստու հմալ թող կը բանձըրցու, օր մարդ կը խեղդի, թե ձձու՛մ էրթա զարկե, կը վլվլա ու պտպտա, շոր լվա՛ կը քֆրե, աման-շաման հմալ չիրար կը զարկե, կըսիս ժաժք է էդի: Ուր խորոտ ու խելք իրկան շը հավնի, ծիծղա վրեն, կը նալըթե, կը թքու, յանի թե՛ ուրին հավսար շէ, թե ինք կոնեբ փաշի մե տղի կնիկ էղնեբ, մկա զէդ պլնջոտն է առի: Տնեցիք կը շիվրին մնան. դուս էնին՝ շէղնի, տուն մնա՛ անձի ցեց է. խուլասա՛ գլուխ ուրանց կախ՝ կը տանին ուրանց հարսի խաղթութեն:

Օրերուց օր մե ըդրա իրիկ ուրին-ուրին կըսե.

— Տնա՛քանդ, հմլա շապրվի, բու ապուռ թալեր իս ի ներս, կը հալիս-մաշիս իմալ մոմ դեմ դոլուն, չելի գլուխդի առ գնա հմալ տեղ մե, օր էրթալ էղնի, դառնալ շէղնի:

Կըսե, դեկնա կէրթա հասնի, ըսինք, Մշու քաղաք, տուն մն խոնախ կէղնի, կը տեսնա, օր մարդ ու կնիկ հմալ ին հըտ իրար, իմալ քուր ու ախալեր: Էնի ընդրան—ջան, էսի ընդրան—խորքան կըսին, կը ծիծուան, կը խնդանան, իմալ յոթ օրվա պսակուկ:

Հաց օր կը դնին՝ խոնախ դձեռ դերկընցու, օր բրդուճ մ՛էնե, ձեռ չետ կը քաշե: Տանտերն ու կնիկ կը զարմանան: Տանտեր կըսե.

— Յորի՞ն ձեռքդի քաշիր:

— Բան մե հարցում, նոր զքու հաց կտրիմ:

— Հա՛րցու,— կըսե տանտեր:

— Քանի տարվա պսակուկ իք:

— Յեռսուն,— կըսե տանտեր:

— Է՛, բարի՞շ կապրիք:

— Յորի՞ն շապրինք, պատճառ մե չկա:

Տղեն խորունդ ա՛խ մե կը քաշե, էրնեկ կիտա մարդ ու կնկան, զհաց կուտե, կը քնի, սապախտան շուտ գեկնա չընկնա ճամպա: Կէրթա, կէրթա հասնի, ըսինք, Խարբերդու քաղաք, սոխըխներ զվոնեկու վախտ կը տեսնա հանդե մարդ մե վըր դուան սանդի քարին նստուկ գիլա, հմալ գիլա, օր զքար ու ծառ կը լացու: Տղեն կը մոտենա, ձեռք կը դնե փիջուն, կը հարցու.

— Մա՛րդ, դու չորի՞ն հմլա գիլաս:

Մարդ զգլուխ կը վերու, կիշկե տղին, խորունդ ա՛խ մե կը քաշե, կըսե.

— Իմ դարդ մեծ է, ի՞մալ չիլամ:

— Ի՞նչ է քու դարդ, ըսե սա՛նք:

— Է՛, ճամպորդ ախալեր, կնիկ մ՛ունիմ, ձեռնի գերի իմ:

— Ըդ ի՞մալ կնիկ է, օր զքըզի կը լացու:

— Ընձի լեզվով կը լացու, լա՛ո, լեզվո՛վ, լեզուն մըջ բերնին շը կանի, գիշեր ցերեկ կը վլվլա, կը նալըթե, կը քֆրե, կը թքե-մրե: Սուջ մ՛ունենենք՝ կըսենք, հա՛, իրավունք է:

— Խո ծուռ շըս քե՛լերի:

— Չէ՛, խորքան, չէ՛, ուր բնութքն հմալ է:

Տղեն ուրին-ուրին կըսե.

— Վոլա ըդի իմ կնկա դրուֆն է, օր հմալ է՝ ես մինակ չիմ:

Զգլուխ կը տանե բերե, թորկե կէրթա: Կէրթա, կէրթա, հասնի, ըսինք, Դիարբերդու քաղաք, գընկնա սոխըխներ, կը տեսնա հանդե

կնիկ մե՛ թևեր քշտուկ, էրկու ծծեր, ես ըսիմ խմորի գնդեր, դու ըսե՛ շան լակոտներ, կախ ուր դոշուց, փետն ի ձեռ, մարդու մե կը լարե, հասնի օր ծեծե: Կը տեսնա՛ հանդե հասավ, զմարդ գլորցուց գետին, փետ է, օր կը զարկե, լանգա է, օր գիջու շան-ջանդակ, քիթ ու մուռթ շիշկե, հմալ կը հսլե, իմալ խմոր կը հսլին, օր կը բեզրի՛ զմարդ կը թորկե պարկուկ, քանիմ՝ մուռտալ քուֆր կէնե, գը՛ֆ կիտա, իմալ զարկան մատակ՝ կէրթա տուն:

Տղեն կը մոտենա, կըսե.

— Քե՛նի, ըդի ո՞ն էր, քըզի յորի՞ն հմլա արաք-թիմարիմ՝ տվեց:

Մարդն իմալ շողուգողի մեջ՝ զաչքեր կը բանա, կիշկե, քանիմ՝ կցկտուր խոսքեր կըսե, տղեն գիմնա, օր ծեծող մարդու կնիկն է, զմարդ տվեր է դըրբի է՛ն յապով, օր ուրին կը մեղդրե ծուռ ճամպով էրթըլու մեջ, համ էլ նոր հալավ չը կոցեր է առի:

— Փա՛ռք իմ քու տնեն, աստվա՛ծ, իդամլա կնկա մոտ իմ կնիկ աղվընեկ է:

Կըսե, կը թորկե կէրթա: Կէրթա, կէրթա, հասնի, ըսինք, Շամ քաղաք, գիշեր խոնախ կէղնի արաքի մե: Արաքն ըդոր հաց կիտա, դեվի կաթ կը խմցու, խուրմա կիտա անուշ էնե, հըտ չիրար ախշըրի խեր ու շառից կը զրուցին: Ֆիրկուն օր կէղնի՛ կը տեսնա հանդե ուրիշ արաք տղամարդ մե ներս մտավ, առավ զտանտիրոջ կնիկ, քաշվավ ուրիշ քոխ մե: Մարդ ըսկի ճուտուն չը հանե, ամոթուց կը կախե զգլուխ:

— Ըդի ո՞ն է,— կը հարցու տղեն:

— Ըդի մեր Շամա յըմնուց զանգին մարդն է,— կըսե տանտեր:

— Է՞, չետև՛:

— Օր ձեն հանիմ՝ զիսի քշկ կիտա սուրգուն, իմ ճարն ի՞նչ:

— Թֆո՛ւ,— կը հեռսոտի տղեն,— իգա կնիկ հող է լցի քու գլխուն, զէրկուան էլ սպանե՛ գնա սուրգուն. սուրգունն աղեկ չէ՞ ըզըրնե: Վոլա ես քու տուն չը մնամ:

Կըսե, գելնա, օր շուտ մե էրթա:

— Կա՛նի,— կըսե տանտեր: —Քո ճամպեն ո՞ր կը փակե: Ինչ օր տեսար՝ հմա հմա՛լ է, մարդու էրթըլուց չետև գուզի՛ս իսպաթ-շհադ էնինք, սանք կոնանք իսպաթ-շհադ էնինք:

— Է՛նինք,— կըսե տղեն:

Կնիկ ճւլլալով, րլըլալով զզանգին սիրող ճամպու կը դնե, յետ գիկա, խուր կիշկե ուր մարդուն յոտից գլուխ, զձեռ թափ կիտա, մարդ ու խարիբ կը շիվրին, ինչ կէնին-չէնին չըն կոնա վըր կնկան իսպաթ-շհադ էնին: Կնիկն էրկուսի վրեն հմալ կը բոռա, օր կը ցմբին:

- Հավկուրնե՛ր, իմ մոտ ո՛չ մարդ էկավ, ո՛չ գնաց:
- Տո ի՛մալ, կնի՛կ, ի՞նչ կըսիս:
- Ձե՛նդի, քոպակ տրխըզ, շատ չեվել-պակաս չը հաջա՛ս, թե չէ՛ դքու փլավ կէփիմ:

Մարդն ամոթուց ու ահուց ձեն կը թալե փոր, քաշվի մեկ դէն:

Տղեն կը թորկե, գեղնա չընկնա ճամպա: Կէրթա, կէրթա, հասնի տեղ մե, չուր օր շորս ճամպեք կը խաշին զիրար: Ճամպե մե կէրթա դեհ արևելք, ճամպե մե՝ արևմուտք, մեկն հուսուա, մեկել լե հարաֆ: Կը տեսնա վըր ճամպու կցվընոքին հանդե սիվտակ շորով, սիվտակ մուրուքով հալվոր մե նստուկ: Ո՛ն կէղնի, ո՛ն շէղնի, տղեն չուշիկ մե կը մոտենա, կը հարցու.

- Բարև, ա՛յո:
- Աստժու բարին, ո՛րդի:
- Դու ո՞ն իս:
- Սարը էրե՛ գիմնաս:
- Իդա շորս ճամպեք դո՞ր կը տանին:
- Ես է՛ն իմ, օր հուր-հավիտենից կապրի, ո՛չ ծեր ունիմ, ո՛չ վեռը, ո՛չ ահ, ո՛չ մահ: Ընձի ժամանակ կըսին: Իդա շորս ճամպեք օր կը տեսնաս՝ մարդոց ճամպեքն է, ընդոք շորս դիեն գիկան, կը քելին, դընցնան-կէրթան, հմա շորս ճամպեք կան ու կը մնան:
- Մկա ես ո՞ր ճամպով էրթամ:
- Ո՛ր ճամպով գուզիս՝ գնա, հմա մեկ է՛ էլման կը դառնաս, չիգաս կանիս իմ մոտ:

- Ի՞մալ:
- Հմալ: Բան չկա, օր առանց ընձի էղնի: Ես չըմեն ինչ գիմնամ ու կը տեսնամ: Որդի՛, գիմամ չորինիս էկի հասի չիդա տեղը: Յորի՞ն գքըզի կը շարշըրիս, դա՛ռձի գնա քու տուն, կնկադ հետ լեզու դտի: Կյանքն առանց կնկա շէղնի, ընի տղամարդու կեսն է, էրկու կես՝ կէղնի մեկ, ըշտե ըդի կյանքն է: Դա՛ռձի գնա քու տուն, դու տեսար, ես լե տեսա՝ քու կնկաց բեթար լե կա մըջ անցվոր ախշըրին:

Կըսե հալվոր, կը դառնա աներևութք:
Տղեն ինչ ճամպով գացեր էր, էն ճամպով լե կը դառնա գիկա տուն:

